

(ՊԱՏՃԵՆ ԿՈՆԴԱԿՏԵՆ)

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍՔԵՆԻ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԼՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՒՄԱՆՍ ԵՒ ԿԼԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԼՏԻՒՆՔԻ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԻՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵԼԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԼԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԵՐԱՊԱՏԻ ՄԿՐԻԶ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՐԱԶԱՍԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ԽՆԳԱԼ Ի ՏԵՐ:

Յօրէ յորմէ հետէ ամբարձաք ի Գաճայրապետական անհասանելի կամօքն Աստուծոյ և ընտրութեամբ լուծեան Ազդիս, զօրհանապաղ նուիրին ժամք և ընթացք կենացս ի հոգացողութիւն և ի պաշտպանութիւն Հօտին Վրիստոսի, ի բարոյական վերականգումն նորին և ի պայծառութիւն Ակեղեցւոյ մերոյ սրբոյ, աւանդապահ կացեալ նախնի սրբոց Հարց կանոնաց, և հաւատարիմ Փրկչին մերոյ անստերիւր և փրկարար վարդապետութեան, որ նախամեծար քարոզէ զսէր, և զմիութիւն և զեղբայրսիրութիւն:

Ապաքէն անհնարին աղէտք և անըմբերելի վիշտք են որդեգորով Հօր տեսանել վտարանդի և անզերասփիւռ զսիրելի որդիս տարաբաղդ Հայրենեաց, մանաւանդ զի ուրեք ուրեք առաջնորդեալք նոցա ի մերոց վարձեալ պաշտօնէից և յօտարաց յառաւել ևս ի հեռաւորն վարին անպատ պանդխտութեան, տակաւ առ տակաւ խորթանալ ըստ ամենայնի ի գթառատ զրկաց Սօրն լուսոյ: Արդ գոլով մեր հեռի ի վտարանդեաց որդւոց մերոց սիրելեաց բազմօք իմն ասպարիզօք, քանի՜ տաղ-

նապ, և որչափ զժուարին է մեզ ընդ փոյթ հասանել օգնութեան և զառաջս առնուլ փնասուց և զարման մատուցանել վտանգացն, որպէս և յայս նուագ ուրուրեմն լուաք զպարականոն վճիռ: Արեստիտիսանկան ժողովոյն Կ. Պօլսոյ վասն ընտրութեան Չերոյ և վաւերացման ի հակաթոռն Կաթողիկոսութիւն Սոյոյ:

Չեն ինչ պէտք բացատրութեանց ի հմտութիւն անցիցն յաղագս կանխատես լինելոյ ամենայն վտանգաց ապառնոյն, պառակտման ասեմ և զլորման Ազգի մերոյ և Ակեղեցւոյ ի վիճ կորստեան ի խոտոր ընթացից Պատրիարքարանին Պօլսոյ, զի եթէ բարոյական միութիւն Հայաստանեայց՝ զոր պահպանեցին սուրբ Հարք Ակեղեցւոյ մերոյ ի դառն ժամանակս հալածեալք՝ չարչարեալք՝ և զմահ անգամ ճաշակեալք ի բազմադիմի թշնամեաց, և առ մեզ աւանդեալ հասուցին, քանի՜ առաւել յայսրմ ազատութեան ժամանակիս, փոխանակ առաւել ևս միանալոյ հաստապինդ շաղկապօք սիրոյ՝ և լինելոյ հաւատարիմ ժառանգք նուիրական աւանդութեանց նախնեաց, անպատեհ խնդիրս յարուցանելով առիթ լինին բաժանման միութեան Ակեղեցւոյս Հայոց, արկանելով զանձինս ընդ ծանր պատասխանատուութեամբք առաջի Աստուծոյ և Ակեղեցւոյ մերոյ, և որ առաւել փնասակարն է՝ յեկեղեցականաց ոմանք յանձնապատան ժպրհին ի նոյն, որոց չնրեն երբէք եկեղեցական իրաւունք ձեռնամխիլ, և տքնին արկանել և զՉեր ի նոյն վիճ:

Արդ արժանացեալ Չեր պաշտօնի Առաքելութեան՝ այսինքն է սրբազան աստի-

